— “Ահաւասիկ երանենք համեմողաց, զհամբերութիւնն (Յովայ լուարուք) և զկատարումն Ցէն, տեսէք, զի բազմազութ և Ցէր և ողորման: Յառաջ քան զամենայն ինչ եղբարք իմ, մի երջուցուք, մի յերկինս, մի յերկիր, մի յայլ ինչ երգումն, այլ եղիցի ձեր այսն՝ այս, և ոչն ոչ, զի մի ՚ի կեղծաւարութիւն ինչ անկանիցիք, (Յոկ. Ե. 11. 12):

— “Եկեղծաւորն բամբասեալ է ՚ի զրոց, և մանաւանդ ՚ի Ցէրոնական բանիցն. որպէս յորժամ ՚ի զերտնին առակի կեղծաւոր կոչէ: զնա՞ս որ զընկերին շիւլն տեսանե... նմանապէս և ՚ի պահոցն ճառի հրամայէ չնմանիւ կեղծաւորաց: Խսկ անտանօր ոս յերգմանս ճառի զբանն ՚ի կիր արկանէ, առ ՚ի ըմբերմնել զայնոսիկ՝ որ տնիարարար յերդամանու բերին և մեղս ինչ ոչ վարկանին: (Յայու տռնէ թէ ընդ մեծագոյն մեղադրութեամբ են, և կեղծաւորացն նմանկը. Օք սակս այնուրիկ կեղծաւորին յերգումն. զի առ մարդկան արդարք երեսոցին՝ անբարագ զուլով. և կամ զոր Ցէրն ՚ի շարէն ասաց զաւելին քան զայսն և զոշն, առ զնոյն կեղծաւորութիւնն անուանէ: Ա ասն զի զի՞նչ այլ ինչ է կեղծաւորութիւնն՝ քան եթէ ՚ի շարէն իսկ ծնուանդ, մանաւանդ թէ զնոյն բնիքն զիերգարան չարբն կեղծաւորն զգենու, և ապա խարել կարէ զորս կամի, (Ուուտ. Ընորհ. ՚ ՄԵՒԻ. (Յոկ. Ֆու ՃԱ):

ԴԱՍԱԿԱՐԱ

ՀԱՅՈՒԹՈՒԹՅՈՒՆ

Մարդասիրական բարեկարսւթիւն և ներողամիտ քաղցրութիւնն՝ Աստուածահամոյ գերազոյն առաքինութիւն է և կատարելութիւն քրիստոնէական պարտաւորութեան: Ահա և զայս կատարելութիւնն չնորհական օրինօքն իւրաք հաստատեաց Յիսուս Քրիստոս փրկիչ մեր. և զանկատարութիւն հին օրինին լրոյց հրամայելովն:

— “Ա աւարութ զի առացաւ. ակն ընդ ական, և առաջ ընդ առամն. Ամեւ ես առեմ ձեզ՝ մի կալ հակառակ չարին. այլ եթէ ոք ածիցէ ապատակ յաջ ծնօտ քո՝ գարձն նմա և զմիւն. և որ ոք կուֆցէ գատել և տոնաւլ զշապիկս քո, թող ՚ի նմա և զրանկան քո: Եշ որ ապատապարհակ վարիցէ զքեղ մղան մի, երթ ընդ նմա և երկուս: Ոյ ոք խնդրէ ՚ի քէն՝ տուր. և որ կամի փախ առնուլ ՚ի քէն; մի գարձուցաներ զերեսոր (Առա. Ն. 38. 42):

— “Ձեւ հատացի երբէք այնոցիկ պյաք հատացին ինձ չար, անկոյց և ես ՚ի թշնամեաց իմոց ընդունայն” (Առա. Ե. 5):

— “Ո՞ի ումեք չարի չար հատացանէք, խորհեցարուք զբարիս ու աշին մարդկան”, (Առա. ԺԲ. 15):

— “Ո՞ի չար փոխանակ չարի հատացանել կամ բամբասան ընդ բամբասանաց. այլ զնոսրին հակառակն՝ որ հնել, զի յայս իսկ կոչեցարուք՝ զի զօր հնաւթիւն ժառանդիցէքո” (Ա Պիտ. Է. 9):

— “Քամի ինձ թէ զայս առելով զօրապացն և մեծատանցն պատուիք որ կարող են չար փոխանակ չարի հատացանել կրասերագանիցն, և ՚ի առնջան և ՚ի բանդու և ՚ի առգանս զնոսա արկանել: Արդ ամենայնիւ պատկառեցուցանէ զնոսա յօրինակացն Վիրիտառափի Տիկն քո չարչարեցաւ, ասէ, ՚ի Արէկից ՚ի զիրոյ ոյնքան բիւրապատիկ երախտեացն, նախատեցաւ և բամբասեցաւ՝ և չար փոխանակ չարի ոչ հատաց. և այն՝ զի կարող էր տաննայնիւ սատակել զնոսա, և հուր առնջողական յերկնից ՚ի զի նոցա իջացանել որպն Արգոմայեցւոցն. և կմ երկրի հրաման տալ բերան բանալ և կլոնել զնեն, որպէս զի առգան և զի Արէկոն. և կամ ջրով հեղձուցանել, որպէս զայնոսիկ որք պառնկեցան ընդ գտտերսն լայենիւ Արդ նմանեա, ասէ, Տիկն քու որ մարդդ ես, և մի յաղթիր ՚ի չարէն փոխանակ նմա հատացանելով. այլ յաղթեա բարեաւու չարին՝ երախտիս ինչ նմա առնելով” (Ա Պիտ. Ըստհ. ՚ի Արեն. Պիտ. Տառ Ե):

ԴԵՍ ԽԵ:

Հայուսած է:

Իրաւամբ հաստատեմք և յայտնի կացուցանեմք զշնորհական որդեգրութիւն մեր առ Հայուսած, Թիւ ՚ի

բանս և ի գործս մեր հանդիսացուցանեմք զանյիշաչարութիւն և զանոխակալութիւն սրտի և կամաց առ անձնական իւրաքանչիւր թշնամիս մեր, որով հաղորդիմք ։ օր Աստուծոյ բարերար՝ և մարդասիրական սքանչելի կատարելութեանն։ Յայսմ շնորհական գերագոյն բարեմասնութենէ վերջացեալ էին պատուիրանք հին օրինաց։ իսկ միածին որդին Աստուծոյ փրկիչն մեր՝ շնորհական օրինօքն իւրովք հաստատեաց, որպէս զի ծշմարիտ հաւատացեալք՝ իրաւ որդիիք սիրելք ։ օր Աստուծոյ՝ զնորին զանօխակալութեան և զերկայնմտութեան զհրաշազարդն նմանութիւն անջնջելի նկարագրեալ ունիցին՝ ի հոգիս իւրեանց։ վասն որոյ հրամայեաց յաւետարանելն ։

— “Ո յ ուարուք ապաքէն զի առացաւ սիրեացես զընկեր քո, և առենցես զմնամին քո։ Այլ ես ասեմ ձեզ, սիրեցէք զթշնամիս ձեր։ որհնեցէք զանիծիչն ձեր։ բարի տրարէք առելեաց ձերոց, և աղօթու տրարէք ՚ի վերայ այնոցիկ որ լվէնն զձեզ և հալածեն։ զի եղիջիք որդիք ։ օր ձերոյ որ յերկինն է. զի զարեղակն իւր ծագէ ՚ի վերայ չարաց և բարեաց, և ածէ անձրե ՚ի վերայ արգարոց և մեղաւորաց։ Ո յ եթէ սիրիցէք զայնոսիկ որ սիրենն զձեզ՝ զի՞նչ վարձք իցեն։ ոչ ապաքէն և մաքսաւորք զնոյն դործեն։ Եւ եթէ տայցէք միայն ողջոյն բարեկամաց ձերոց՝ զի՞նչ աւելի առնէք. ոչ ապաքէն մաքսաւորք և մեղաւորք զնոյն դործեն։ Այդ եղերուք դուք կատարեալք, որպէս և այրն ձեր երկնաւոր կատարեալ է։” (Առաջ. Ե. 43. 48.):

— “Ո յ մի ոք անկար համարեացի զառացեալս, թէ զիսրդ հնար է զթշնամիս սիրել. ասէ ես ասեմ ձեզ, այսինքն զի նախ թշնամութիւններ արարածս առ արարին, վասն այսորիկ ոչ կարէին մարդիկ առ միմեանս զհանգամանս սիրայն առ թշնամիսն տնօրիննել։ Իոկ այժմ բարձից ասէ թշնամութիւնն մահուամբ մարմնոյ իմոյ, որպէս ասէ առաքեալն։ “Այնչ թշնամիքն եաք՝ հաշտեցաք ընդ Աստուծոյ ժահուամբ որդւոյ նորա։” արդ որպէս նա զձեզ սիրեաց՝ որ թշնամիք էիք նորա, այսովէս և գուք զթշնամիս ձեր սիրեցէք։ Յայց Քիսուս զո՞կոչէ թշնամիս։ որք կենաց մերոց դժբիչք են ըստ ամենայն վասուց, թշնամիք են մեր և տտեն. զոր ներել հրամայէ… զդուու ամենայն բարութեանց՝ որ կատարումն է մարդոյ, ’ի յաւարտ բանիցս դնէ. զի ոչ առաց միայն թէ “Այրեա կամ օրհնեա կամ բարի արա”, այլ թէ “Եւ աղօթը մատոն, որ մատաց է գործ, զի բազումք թէպէտ մարմնոյն կերպա-

րանօք ցուցանեն սիրոյ հանդամանս, սակայն մոգք զանձառելիան բարբառին. վասն այսորիկ կամեցաւ զմացն ախտ փարատել. աղթեա ասէ այսպէս առ Աստուած: «Ո՞ք համարիր նոցա մեզս զոյն». կամ թէ «Դզասառթիւն յայնց բարոց փսփոխեա զնոստ»... Արդ. զայս առելով՝ ի սիրելեացն սիրոյ հրաժարեցացանէ. զի յայն բնութիւն քարշէ. և հասարակաց կրօնից գեր՝ ի վերայ կացուցանէ. կատարելուն անունն ասէ՝ ի վերայ այնոցիկ՝ որ բնաւին իւկը ոչ են պակաս. ըստ այնմ թէ «Ամենայն ինչ կատարեալ է»: Արդ վասն զի երկու անսակս բանի եղաւ առաջի, մի՛ բնութեան, և միւս՝ բնուպատաւթեան. զի սիրել զսիրելու՝ ամեն եցունց է, սակայն կիսակատար և թերի դասնի. իսկ սիրել զթշնամիս՝ կատարելոց է որով Աստուծոյ նմանի, որ զարդակին և զտնձրե. հասարակաց բաշխէ. վասն այսորիկ տաց թէ «Դշղերուք կատարեալ, որպէս և Նայն ձեր երկնաւոր կատարեալ է», (Յուն. Ծրաբծոր. կ Անհ. ԱՐ-Փ. Ե. Կկ.):

— «Տես, ասէ Ասկերերան, հրամայէ Տէրն մը սիրել զթշնամիս. այսինքն՝ զթշնամիս անձին քո, և ոչ զթշնամիս Աստուծոյ ճշմարտութեանն. և քրիստոնէական ուղղափառ կրօնից: Ո՞ք ասեր թէ «Դա աղքատ ոճ եմի մէջ թշուառ վիճակի տառապեալ. և զոշինչ ունիմ, ապա զիարդ կարիցեմ բաւական բարիս առնել թշնամոյ իմոյ»: Առ այս՝ խարիս դու եղբայր. «ոչ ոք ունի թշնամի որ չունի բարիս, եթէ բնական և եթէ ստացական: Աւնին թշնամիս, ապա ուրեմն ունիս զբարիս նախանձելիս, որոց վասն նախանձու շարակամք են քեզ թշնամք» (Ասկե. կ Անհ. սէրեցէւ շնչառիս յեր):

Այսէն թշնամացեալ էր՝ ի նախանձուէն՝ Արէլ եղքօր իւրում, վասն զի պատարագն Արէլի յայժ հածելի եղե առաջի Աստուծոյ: ուստի դառնացաւ անձն նախանձուտին՝ ի վերայ եղբօրն, քանզի ոչ հածեցաւ Աստուած ընդ զոհս Այսէնի, ըստ այնմ «Նաւատովք զւաւ պատարագս Արէլ քան զԱյէն մատուցանէր Աստուծոյ, որով վկայեցաւ իսկ արդար լինել. զի՝ ի վերայ պատարագացն եղե նմա վկայութիւն յԱստուծոյ. զի թէպէտ և մեռաւ.՝ ի նմին, սակայն տակաւին իօսի» (Աբբ. Ժա. 4): Թարշնամացան մետասան եղբարքն՝ Յովսէփայ. վասն էր. ահմա զպատճառն յայտնէ սուլր Գիլք: Խսրայէլ սիրէր զՅովսէփ առաւել քան զամենայն զորդիսն իւր, քանզի ծերութեան էր նորա. և արար նմա պատմուճան

ծաղկեայ։ Եցրեւ տեսին եղթաքը նորա, թէ սիրէ զնա հայրըն քան զամենայն որդիս իւր, ատեցին զնա, և ոչ կարէին խօսել ինչ ընդ նմա խաղաղութեամբ» (ԾՕՀն. Քւ լ. 3. 4)։ Սաւուղ հալածէր զԴաւիթ առ նախանձու, վասն զի Աստուածային զօրութեամբն յաղթեաց նա Պաղիագու և սպան զնա։ ընդ որ նախանձեալ զւարեցաւ Սաւուղ, որպէս գրեալ է (ա թագ. ծէ. 45. 48. ծէ. 6. 8)։ Խակ իբրեւ միջոց եղեւ Դաւթի, փոխանակ նախանձու չարութեան Սաւուղայ՝ ոչ վրէժինդիր եղեւ 'ի կորուստ կենաց նորա, մինչեւ զզացաւ Սաւուղ։ «Եւ ամբարձ Սաւուղ, ասէ սուլրը Գիր, զձայն իւր և ելաց։ Եւ ասէ Սաւուղ ցԴաւիթ։ դու արդար ես քան զիս, զի դու հատուցեր ինձ բարիս, և ես հատուցի քեզ չարիս։ Եւ դու պատմեցեր ինձ այսօր զօր արարեր ինձ բարիս, և թէ որպէս փակեաց զիս Տէր այսօր 'ի ձեռս քո, և ոչ սպաներ զիս։ Զի որպէս գտանէ ոք զթշնամիս իւր 'ի նեղութեան, և արձակիցէ զնա բարեաւ ընդ ճանապարհ, և Տէր հատուցէ նմա բարիս։ որպէս դու արարեր այսօր»։ Եւ արդ՝ զիտեմ, զի թագաւորելով թագաւորեսցես, և հաստատեսցի 'ի ձեռս քո թագաւորութիւնն Խարայէլի» (ա թագ. իշ. 17—21)։ Եպա իրաւամբ տեղի պարձանաց ունէր երջանիկ մարդարէն Դաւիթ աղալակել առ սրբտագէտն Աստուած։ «Թէ հատուցի երբէք այնոցիկ՝ ոյք հատուցին ինձ չար, անկայց և ես 'ի թշնամեաց իմոց ընդունայն» (Ապշ. Է. 5)։

Եմո՞ համարձակիմ ասել թէ սրտիւ անոխակալ անձինք ստանան զնմանութիւն կենարարին մերոյ Յիսուսի Վրիսառոսի, ըստ այնմ

— «Ձն վասն ձեր մեռաւ, և եթող զրինակ՝ զի զհետ երթայցէք զհետոց նորա։ Ով ոչն արար մեզո, և ոչ դտաւ նենդութիւն 'ի բերան նորա։ որ բամբառոն՝ և ոչ փոխարէն բամբառէր, չառշարեալ՝ և ոչ պահէք սպառնալիս» (ա Պիգ. Է. 21. 23)։

— “Եւ շարչարանս ոչ միատեսակս և ոչ դրւզնաքերյս ինչ, ոյլ բիւրտպատիկ շարչարանս և վէրս և աղդի ազդի նախառինս և թշնամնս : Օյրս թէ զամենեսեան ոք կամնոցի՝ի համար արկանել՝ ոչ կարէ : Այլ խոն մի նշանակել յաւետարանէն՝ չէ ինչ տարագեղ . որով զանեղական զանոխակալութիւն Տեսան՝ մերյ ծանիցաք, և շըրէիցն զժպիրհութիւն և զնենութիւր իմաստութիւնն : Ա ասն զի յետ զանազան բամբասանացն՝ կալան զնա և կապեցին և յատեան ածին, և ազտակեցին զնա ըստ մարդարկին : և զի թքին ընդ երեսս նորա, և զի եղեգամիր հարին զգուխ նորա, և զի մերկացացին զնա, և զի զօսակ փշոց եղին ի զլուխ նորա, և զի հարին մեղաւորք զթիկունս նորա, և զի ընդ փայտն բենեւեցին զնա, և զի քացախ և լեզի ետուն նմա ըմպել, և զի գեղարդեամբ խոցեցին զիուս նորտ, և զի շարժէին զզլուխո իւրեանց և ասէին “Օյըլ ապքեցոյց՝ զանձն ոչ կարէ աղբցուցանել, և եթէ որդի Աստուծոյ է որպէս ասէրն՝ և յուսացաւ՝ի նա, փրկեսցէ զնա եթէ կամք զնա” : Եւ նա յայսքան և յայսպիսէ շարչարանս անոխակալ լիներ առ նոսա. և ոչ միայն անոխակալ, ոյլ և աղօթս և առներ վասն կենաց նոցա և փրկութեն, (Ո՞րէ Շնորհ. է Ո՞նի. ա. Պիտ. Է. 21. հու չ):

Տես, թէպէտ Հիսուս Փրկիչն մեր զամենայն նախատինս յանձին իւրում սքանչելի համբերութեամբ և անտեսակալութեամբ տանէր. բայց ատելով ատէր զհակառակոզ Աստուածայինն մարդասիրական շնորհաց և զօրութեանս : Ա ասն որոյ սոսկալի փայ տալով նոցա՝ ասէր :

— “Ա ոյ քեզ Քրորազին, փայ քեզ Անթսայիդա. զի եթէ՝ի Տիւրոս և ՚ի Անգոն եղեալ էին զօրութիւնքն՝ որք ՚ի ձեզ եղեն, վազու և արդեգը խորդով և մոխրով ապաշխարեալ էին”, (Ո՞րո. Ճ. 21):

— “Ա ոյ ձեզ օրինականացդ. զի թագուցանէք զփականս դիառութեան, դուք ոչ մատնէք, և որք մատնեցցն են՝ արդելուք” (Ո՞րո. Ճ. 52):

Եւ ոչ միայն ինքնին Փրկիչն մեր ատեաց զթշնամիս ճշմարտութեան իւրում, այլ և ուսոյց ընտրեալ աշակերտաց իւրոց և ամենայն ուղղափառ հաւատացելոց՝ յամենայնի զգուշանալ և ատել զնոսա, և արհամարհել զիսարէապատիր բանս նոցին :

— “Օ դայ լերուք ՚ի սուտ մարդարեցին՝ որք դան առ ձեզ հանգերձիւք ոչնարաց, և ՚ի ներքոյ, են դայլք յափշտակօղք” (Ո՞րո. Ւ. 15):

— “Օդոյշ լերուք ՚ի խմորոյ տնտի Փարիսեցւոց՝ և ՚ի խմորոյ Նեւ բազգիանոսաց” (Ո՞ւ՞է՛ Է: 15):

Եհա զայս զգուշութիւն ուսեալ ՚ի ճշմարիտ վարդապետէն ՚ի Յիսուսէտոսէ Կիրիստոսէ սրբազն առաքեալքն՝ վնոյն քարոզել փութացան զրելով այսպէս:

— “Եւյսուհետեւ եղբարք իմ, ուրախ լերուք ՚ի Տէր. զնոյն գրել առձեզ ինձ ոչինչ դանդաղեկ է, և ձեզ կարի զգուշալիք: Օդոյշ լերուք ՚ի շանց անտի զգոյշ եղբուք ՚ի շար մշակաց անտին, (Փէլու. Է. 1: 3):

— “Օդոյշ լերուք, մի ոք իցէ՛ որ զձեզ կողոպաիցէ ճարաարմառաթեամբ և անոտի խաբէոթեամբ” (Առև. Է. 8):

— “Ե ինէին և սուտ մարդարէք ՚ի ժողովրդեանն, որսկս և այժմ ՚ի ձեզ լինիցին սուտ վարդապետք, որք սպրդեալ մուծանիցեն հերձաւածս կորստեան, և զորս Տէրն զնեաց զնոսաւ ուրացեալ ածեն ՚ի վերայ անձանց զարագահասն կորուստ: Եւ բազումք անկեալ երթիցեն զիստ նոցա անառակութեանցն. վասն որոյ ճշմարտութեանն ճանապարհ հայհայիցի: Եւ աղահութեամբ մատացածին բանիւք տռնից ցեն զձեզ վարանգիս: որոց գատաստատն ՚ի բնէ ոչ գատարկանայ, և կորուստն նոցա ոչ նիբհեացէ” (Ք Փէտ. Է. 1: 3):

— “Խիրելիք մի ամենայն հագւոյ հաւատայք, այլ ընտրեցէք զհուգուն եթէ Եւյսունդոյ իցեն. զի բազում սուտ մարդարէք եղեալք են յաշխարհ ՚ . . . Օդոյշ լինիջիք անձանց, զի մի կորուստիցէք՝ զոր վաստակեցիքն, այլ զի առնուցուք բավանդակ զվարձան . . . Եթէ ոք գայցէ առ ձեզ և զվարդապետութիւնս զայս ոչ ունիցի, մի ընդունիցիք զնա ՚ի տռն, և մի ողջոյն տայցիք նմա: Եւ որ ասասցէ նմա ողջոյն, կցորդ լիցի շարաց գործոց նորա, (Ա Յով. Է. 1: Է. Յով. Ա. 8):

— “Եւյսոքի բատ նորուն Ցիտան ձայնին, զի և նա զօյն զուշակեաց և հրամայեաց՝ մծապէս զգուշանալ յայնպիսի վնասակարացն ե ՚ի խարեւայիցն: Օդոյշ լերուք, ասէ, ՚ի սուտ մարդարէիցն, որք դան առ ձեզ հանդերձիք ոչխարաց՝ և ՚ի ներքոյ են դայլք յափշտակողք: Ոսրին վասն և սո զնոյն ժամանակն նշանակէ: առելով, Շազում սուտ մարդարէք ելեալ են յաշխարհ: Ուք ՚ի հագւոյն մալուրութենէ իսուէին և կերպարանէին զինքեանս ՚ի կերպարանս ճշմարտաւեան, և այնու զզարզամիտն խաբէին՝ աշակերտել իւրեանց մոլորութեանն: Ա ասն զի գող է բանստրկուն, որպէս զինքն կերպարանէ ՚ի հրեշտակ լրւայ, վասն զի խաւար է՛ և լիյս կերպարանի. նմանապէս և զպաշտօնեայսն իւր կերպարանէ ՚ի կերպարանս աշակերտացն ճշմարտութեան, նոքզք որսալ զբաղումն՝ և ՚ի վիհա կորստեան արկանել: Եւ զի մի ոք գժուարեացի, եթէ զիարդ կարտուցուք ընտրել

Դաստիա՝ որ 'ի կերպարանս ճշմարտութեան դան առ մեղ' և 'ի ներքոյ են ուսլիք յափշտակողք, նշանս տայ նոցա, որպէս և ջերն՝ առաբելցն. ի պազց նոցա առէ ծանիցիք զնոսա» (Առէ. Հ նորհ. է Ս եթ. ա. Յ ան. է):

ԴԱՍ ԽՈՉ.

Հ. Վրիստոնէական ուղղափառ սուրբ կրօնին վախանական զիտումն և վերջին նպասաակն ուր հայի, և կամ մաք հասուցանել խոստանայ զճշմարիտ և զուղղափառ հաւատացեալս. և զայս կարևորագին է զիտել:

Պ. Ուղղափառ սուրբ կրօնք մեր շնորհական նոր օրինացս, որ փրկարար տնօրէնութեամբ կենարաբին մերոյ քիսուսի Վրիստոսի հաստատեալ է և յամենայն աշխարհ աւետարանեալ և քարոզեալ, միշտ զարթուցանէ զակնկալութիւն մեր հոգւոյ՝ փայեկել զանվախճան երանութիւնն ամենացանկալի փառաց Աստուածատեսութե: Եւ առ այն առաջնորդէ, և քաջալիրէ ստանալ զայն առաքինազարդ կենդանի հաւատով հաստատուն յուսով և կատարեալ սիրով. ըստ այնմ

— «Գառհանամ զԱստուծոյ և զԱօքէ Տեսուն մրոյ Յիսուսի Վրիստոսի, յամենայն ժամ վասն ձեր ազօթս առնեմ: Իրեւ լուսք դհաւատան ձեր՝ որ 'ի Վրիստոս Յիսուս Տիք մեր, և զերն որ ընդ ամենայն սուրբս ունիք, վասն յաւոյն որ զահի ձեզ յերկինս. զարմ բարքուք բանին ճշմարտութեան աւետարանին» (Առէ. Ա. 3. 5):

— «Վիանիի երևեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան. որ իրաւաէ զմզ, զի որասցուք զամբարշտութիւն և զաշխարհական ցանկութիւն, զգաստութեամբ և արգարութեամբ և Աստուածապաշտութեամբ կեցցուք յաշխարհի, և տինկարցուք երանելի յուսոյն՝ և յայսոնութեան փառաց մեծին Աստուծոյ՝ և փրկինն մրոյ Յիսուսի Վրիստոսի» (Ֆէտ. Է. 11. 13):

— «Անմ որ ընարէ զբարին և առնէ երանելի է. իսկ ապիրատքն պատճին կրտսուիք, զի զզլասցին և ապաշխարեսցին զկամակոր վարձն

անիրաւութեան, և բացեն զողորմութեան չորդն՝ ի բարերար Ջեառանէն, որ գթայ առ արարածն իւր և ոչ թողու ՚ի խնամակալութենէ միրզյն իւրոյ : Եշ զանձառ և զանսպառ բարիսն տայ որք խնդրեն ՚ի նմանէ, և լինի պարզեատու որը ազազակեն առ նա ՚ի տուէ և ՚ի գիշերի : Եշ ըստ աւետարանական երանութեանցն կոչէ զամենեսին յիւր արքայութիւնն և ՚ի փառոն, զի ճշմարտեալ ըստ կարգացն ՎԱԿ՝ ժառանգեսուք զերանութիւնսն (Առաջն Համար. Յանի ճառ է):

ԴԱՍ ԽԵ.

Հ. Դամանել յայս երանուի քանի՞ աստիճանք են:
Պ. Օինն աստիճանս երանութեան եցոյց և աւետարանեաց մեզ պարզեիչն ամենացանկալի երանութեան՝ փրկիչն մեր Յիսուս Քրիստոս, զորս պարտաւորիմք աստանօր մի առ մի բացայայտել իննեակ հատուածովք:

Հայուած ա.

Գրէ սրբազան աւետարանիչն Ամաթէոս. “Եւ տեսեալ զժողովուրդն՝ ել՝ ՚ի լեառն. և իբրև նատաւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն նորա: Եւ բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա, և ասէր: Եշանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւնն երկնից” (Առաջ. Է. 1. 3): Առուրբն Յովհան ոսկեբերան ՚ի վերայ այսր բանի՝ բարերանէ զլուստուածային բերանն Յիսուսի՝ զրելովն այսպէս. “Ո՛վ հրաշալի բերան Աստուածային միաձնի Որդւոյն Աստուծոյ, աղքիւր մշտաբուղիս շնորհաց և երանուեց”:

“Եւ զարմանային ընդ բանս շնորհացն՝ որ եղանէին ՚ի բերանոյ նորա” (Գ. ս. է. Է. 22):

— “Իսպամբաւ կեանքն առ ՚ի բաշխել զիենաց կերակուրն ընդդէմ մահաբեր ճաշակացն՝ զոր ընկալու մարզն առաջին ՚ի բերանոյ օձին:

Եւ բացեալ զբերանն՝ բղիւր զջուրն կենդանի՝ շիջուցանել զհարն, որ վառեցաւ յլշայէ. մինչ լուսն կայր՝ զմարմինս նոցա բժշկեր, և մինչ խօսէք՝ զհոգիս նոցա առազշացուցանէք. զի յայտ արասցէ թէ բնըն և արարիչ հոգուց և մարմնոց՝ երկոցունցն ինամ տանելով։ Եւ առէ թէ մատեան առ նու աշակերտքն, մինչ աստ էք. որոց ոչ պատուիրեք պայէս ապերախտին խարայէլի զառ. ի չարեաց միայն հեռանալն, քանզի սպա կատարեալք էին. ոյլ երանութեամբ.ք ՚ի գործո բարեաց յորդորէ զնոսա. որպէս ՚ի յերանութենէն սկսանի ՚ի սաղմոսն՝ յորդորեալ զլսողսն զհետ գնալ երանական դրծոց։ ՚լոյնպէս և որդին ՚յաւթի ըստ մարմնոյ՝ ի սկիզբն իւրոյ վարդապեառութեան շերանութիւնն զնէ, զի աստիճանոք երանութեանց՝ զոր նկարագրեաց ըստ սանդուխին Յակոբայ, հանցէ զմորդիկ յերկինսոն (՚լեր. Շնորհ. ՚լ Մեկն. ՚Մատ. էլ ե):

— “Աւք վասն աւետեացն՝ հոգուով կամաւ աղքատացան, ՚ի բաց ընկեցին զմարմնաւոր զդմնդակ մեծութիւնո, և հոգեւոր յուսով զդեցան զմշտնջենաւոր մեծութիւնսն։ Օք սուրբ մագք և մարմնով և անկեզծաւոր հաւատով կատարեցին զկամն Տեառն միով. . . Շաձեսն պատրաստ ունելով զամենայն ցանկութիւնոն, զոմենելքումք դանց արարին վասն անձառ երանութեանն՝ որ կայ և պահի յօւսացելցն ՚ի Վարիստոս, որ վասն մեր աղքատացաւ, որ Տէրն է փառաց։ Օք հայեցեալք յեւ զնացից կամաւոր աղքատութեանն երախաւուրին՝ հասցն յօթեանս կենաց ՚ի գուան փրկութեան, յանփոփոխելք երանութիւնսն, որ լին է կենդանի և անուշակ երանութեամբ” (Յան. Յանի. Տառ ՚):

— “Աւի խնդրելի է մեզ, զի՞նչ է սահման երանութեան, յորմէ կարենք և զայլս իմանալ։ Երանութիւն՝ պարառութիւն է ամենայն բարեաց, որպէս թշրւառութիւն՝ բարդից չարեաց. որք և ոչ մասն ինչ ունիցին՝ ի բոլորից միմեանց կրից։ Եւ արդ առաջին մեզ ծանուցեալ լիցի երանութեանց ընդունող տիրապէս յէկից՝ ՚յատուածութիւնն, ըստ առաքելոյն թէ ՚յարանելին և միայն հզօրն։ ՚յետ նորա և ՚ի նմանն ընկալեալ՝ բանական բնութիւնն անմարմնոց և մարմառաւորաց։ յաւէտ ըստ պատկերին եղելոց, որքան պահեցոք զոկումատպին գեղեցկութիւնն. իսկ յորժամ նսեմացուցաք զնա մեղք կորուսաք և զերանութիւնն. եկն ՚ի նոյն սկզբնատիպ ՚ի խնդիր իւրոյ կորուսեալ պատկերիս, և գտեալ. յաղըս ախտից՝ լուաց ջրով բանին խազացելս ՚ի կետնան յափտենից. զի լիցի վերստին հաղորդ երանութեանն նորա. . . ՚յարանելիք աղքատոք հոգւով. քննելի է թէ ոք աղքատն է հոգւով։ ՚յարկուս աղքատութիւնս ուսուք ՚ի գրոց՝ որք հասաւի են երկուց փարթամութեանց, մինն փոթալի, և միւսն արհա-

մարհելի. փութալի է մեղացն աղքատութիւն, և առաքինութեանցն ճախութիւն, և արհամարհելի է յարդարութենէ և յիմաստութենէ աղքատութիւնն, և չսրեաց և յիմարութեանց փարթամութիւնն, յորմէ հրաժարեցոյ Տիկին... Եւ գարձեալ՝ քանդի ասոյաք եթէ յէկցս առաջին երանութեան արժանաւոր Աստուած է. իսկ Կ մարդկանէ նմանոցն Աստուածոյ՝ առաքինութեամբ։ Եւ զինմանօղ լինել ամենայինի Աստուածոյ անհնար է, զիարդ հաղորդ գացուք և երանութեանն՝ ըստ վեհագոյն բնութեան. և ոչ երբէք, ոյլ ըստ խանարհութեան մասին, որ վասն մեր կարելի էր կամողաց. որով ինձ թուիթէ աղքատութիւնն հոգւայ՝ կամաւոր խոնարհութիւնն կոչք, որոյ օրինակ է Վարդառոսի խոնարհութիւնն, զոր ցուցանէ մեղ առաւելթէ “Ա ասն մեր աղքատացաւ. որ մեծատունն էր” (Ա,Ե. Հ Հոգհ. ՚ ԱՌին. ԱՌ-Դ. ՚ 3).

— “Երանի աղքատաց, եթէ ըստ Աստուածոյ իցէ, զի փոքր ինչ ժամանակս տաժանեալ՝ անբաւ. յաւիսեանս առ. Աստուածոյ թագաւորեսցն։ Եւ վայ մեծատանց, զի վասն զուն ինչ հանգստեան մնուի կենցաղոյն և խարէսթեանց, գյաւիտենականն դանձեն անձանց ըզրարկութիւն... Վիանդի զինչ քան զայս յիմարութիւն, իբրև զանասուն ՚ մերձակայն և եթ հայել, և որք զգդպութիւնն հեշտացուցանեն՝ ընտրել, և որ յետ այնորիկ զառաջիկայ զիհն կարստեան ոչ տեսանել ստուգապէս. վայ անձանց նոցա, որք զյաւիտենականն զանասելի բարեկենդանութիւնն ընդ ապականացուիս ընդ պյոմիկ փոխանակենն” (Առ-Բն. Խինուոր. ՚ ԱՌին. Դ Հոգհ. ՚ Ն)։

♦ ապուած յ:

- “Երանի սզաւորաց, զի նոքա մսիթարեսցին” (ԱՌ-Դ. ՚ 4).
 - “Գայցէ գարձեալ յորժամ գայցեմ՝ նկուն ինչ առնիցէ զիս Աստուած իմ առ ձեզ, և սուզ առնուցում վասն բազմաց յառաջացն մեղուցելոց, և ոչ ապաշխարելոց՝ ՚ի վրայ պղծութեան և պարնկութեան և գիշութեան, զոր գործեցին” (Է ԱՄ-Դ. ՚ 21).
 - “Արքեցէք զձեռս մեղաւորք, և ուղեղ արարէք զսիրտս՝ երկմաք. տառապեցարուք՝ սպացարուք և լոցէք. ծաղք ձեր՝ ՚ի սուզ գարձի, և ուրախութիւն ձեր ՚ի տրամութիւն” (Յոհ. ՚ 8. 9):

— “Անմեկելի լինի յԱստուածոյ սզաւորն, որ անձկայ շնորհաք տեսանել զանձտուելին՝ որ սրբացն տուաւ. Այլ զզզացեալն է իմանալ սզաւորս, որք գառնան ՚ի չար վարուց ստոյդ խոստովանութեամբ, և հանապազ ինդրեն արտասուօք զթողութիւն յանցանաց յամենցունց Տեսանէն, զի կարացեն հասանել, յօթեանս կենացն՝ որ

լին է անմահութեամբք, և զուարթածաղիկ ուրախութեամբ ընդ ռըշ-
մարիտ սպաւորան ժառանգէ զերանութիւնն՝ որ է յաւիտենից մոփ-
թարութիւնն (Առուբ. 1 սոս. Յանի. 4ու 5):

— «Ղեղեցկապէս զնէ զկարդ ասաբճանիս Տէրն՝ երկրորդ զկնի ո-
ռաջնոյն՝ զի յառաջ երանեաց զաղքատացեալոն յախաից՝ զհողիս,
և այժմ որ ՚ի սուդ լինին վասն մեղացն եղելոց, որով ուսուցանէ թէ:
պարտ է նախ մերկանալ զախաս, և ապա կարիցէ սպալ զառ ՚ի մեղացն
շլարշարան։ զի որբան ՚ի մեղս ոքիցէ, ոչ զդայ հեշտութեամբ զվասն։
Արդյ իրք կրկն է. է որ ըստ մարմայն ՚ի յաճախմանէ արամակա-
նացն մահ գործէ, ըստ առաքելոց (Ը Առու. Ե. 9. 10): Խակ հոգոյն՝
կեանք և խաղաղութիւն, զըստ և երանէ բանո, ոչ զայն՝ որ ըստ աշ-
խարհի արամիցին, այլ որ վասն մեղացն են ՚ի սուդ, այսինքն՝ յորժամ
՚ի զդայսթեան լինի վասթար զործոց անցեալ ժամանակին, և ըզ-
շարութեան ողբայ զիշարս, որպէս սգոյդ անուն յայտնի ունի զաե-
տութիւն առացելոց։ Ասդ ասի՛ վասն սպալոյ զիրս, զըր երբեմ
յանդայութեան գործվ՝ չզդայիր. զի զորօրինակ՝ ինչ յանդամոց ՚ի
յախտէ իմբէ ընդարմացեալ՝ ոչ զդայ ցաւոց, թէ և խոցում որոյ
ընկալցի. այլ թէ ՚ի բժշկական գեղոց գործքի ՚ի կենդանութիւն, զդայ
այնուհեան զցաւոն և փութեայ յառողջութիւն։ նոյնպէս և որբան ՚ի
չարիս են մեռեալ հոգուվ, և անզդայ առաքինութեանց վարուց։ Խակ
նթէ փոփոխոցի կամաւ յայնցանէ, և ատցէ զանձն հոգեարական
կծուագեղոց, այսինքն՝ յիշման առնջանացն և անշէջ զեհենին, ՚ի
զդայութիւն գառնայ ընդամացեալն հեշտութեան ախտիւք անձն,
որով լինի երանելի՛ լուագոյն փոփոխմամբն» (Ա,Ե. Ը Հորհ. ՚ի ԱՌԵ.
ՈՐՈ. Ե. 4):

— «Լու այսպիսի բիւր բանո ողբանաց իօսի առ այնպիսի սպաւորն,
և երանէ զուուդ նորտ, և արժանի միիթարսութեան վարկանի զնա։
Այսանեղիք են ասէ սպաւորքն, զի նոքա միիթարեսոցին. մինչեւ յայս-
պիսի բանիցս համարձակութիւն առեալ՝ սպիցէ ընդ մարդութիւն։
Խարձայ զուուդ իմ յուրախութիւն, էղերն յինէն զքուրձ իմ և զզե-
ցոյց ինձ զուրախութիւն» (Առու. Ը Հորհ. ՚ի ԱՌԵ. Յանի. Յանի. 4ու 5):

Հարուսած դ.

— «Ղրանի հեղոց, զի նոքա ժառանգեան զեկիր» (ԱՌԵ. Ե. 5):

«Օքացատրութիւն սորինւ լուր ՚ի նախահայրապետէն
մերմէ ՚ի սրբոյն Պարիզորէ լուսաւորչէ»:

— «Օտւեաիս եկեղեցւոյ ասէ երկիր, որ ամնաշահ կենօք հան-
գարառութեամբ են ՚ի վարս, աղատեալք յամբիրից և ՚ի խռովութեանէ

գործոնաց և յամենայն գմբետից : Այս զինուորին անշարժ մալպիշ : Հեղութեամբ ցածուցանել զամենայն բարկութիւն և զնասակար շարժմանս զիւրեանց և զամենեցուն, որ ամբաստութեամբ լի են, 'ի կշտամբանս, 'ի առյօն, 'ի տուգանս, յանարդանս, յամօթ և 'ի պէսպէս տանջանս : Իրաւամբք հեղութեանն առաջնորդել յամենայն արգարութիւնս, 'ի սէր անշարժ, յուղեղ հաւատս : Եւ շնորհօք հեղութեանն ընակիլ յերկի, և զուարթածաղիկ յամենայն առաքինուկս անուշահու հեղութեամբն զարդարել, և յօւսով ակն ունել մշանջենաւոր անփոփոխ անվախճան կենսատու երանութեանցն „ (Առաջ Յանի Տուո թ) :

— “ Աստի՛ ծնանիցի հեղութեան կամ ոսրին հակառակ բարկութիւնն, ցուցանել պարտ է, զի որք կամիցին սաանալ զերանութիւն հեղոցն՝ գիրաւ ուղղեցին զառաքինութիւն նորա : Կրնօղ հեղութե Խոնարհութիւնն է, արմատ բարկութեան՝ ամբարտաւանութիւնն . քանզի բարկութեան պատճեռք թշնամնէք և անարդանք լինին . և ուր խոնարհութիւնն է՝ անարգութեանց արտմութիւն ոչ լինի, և ուր արտմութիւնն ոչ է, հեղութեանն ուղղութիւն, յորմէ երանութի, և երանութիւն՝ երիշային երկիրն ժուանդութիւնն (Անդ Շնորհ կ Առեն Առու թ ե. 5) :

— “ Օ, ի բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ : Արով ՚ի բոց թօթափեալ զամենայն աղաւեղութիւնն և պյաւելուածս շարեաց, հեղութեամբ ընդունիջիք դրանն ընդարդոյս, որ կարողն է կեցացանել զոդիս ձեր (Յանի Ա. 20. 21) :

— “ Երբե իրաւաեց դյաւելուածս շարին ՚ի բաց ընկենաւլ և մերժել զնասակարն հոգւոց մերոց, ապս մի թափուր աեղին մասցէ, և գարձեալ շար զօրութիւնքն պատրաստութեամբ ՚ի ներքս անկեալ լինիցի մեղ վերջինն չար քան զառաջինն, նմին իրի զհեղութիւնն զմայրն ամենայն բարեաց ՚ի ներքս մուծաննէ ընուլ զանդին . վասն որպյ ասէ հեղութեամբ ընդունել զրանն ընդարդոյս : Հեղութիւն յառաքինուին ընդ առաջինսն կարգեալ է, նմին իրի յերանութիւնն ընդ առաջինսն ընկալաւ զկարդն . զի զինի մեծի աղքատութեանն՝ զսա կարգեաց Տէրն մը : Եւ ոչ միայն բանիւ յարդէ զսա, այլ և յանձնէ ցուցանէ զպտաիւ սորա, զինքն առաջին եղեալ նախագիծ օրինակ այսմ տռաքինութեան՝ ասէ . Աւտորուք յինէն՝ զի հեղ եմ և խանաբհ սրաիւնա և որք ուղղեցին զնա՝ ՚ի գովութիւնս առեալ են , Աստուծային գրոց, ըստ սրում ասէ . ծառայն իմ Առովտէս հեղ, և քան զամենեսեան . և գործեալ թէ յիշեա Տէր զԴասակիթ և զամենայն հեղութիւնորա : Ինէպէս և յայլ իրս յուրփս առաքինութիւնս ունէին, սակայն ՚ի հեղութեանէն վերադրեաց զնոսա : “ Եսրին աղազաւ և առա զնորին

աւզպութիւնոն պահանջէ: Աեղաւթեամբ առէ ընդունել զրանն ընդունոյս: Այսինքն՝ քաղցրութեամբ և խռնարհութեամբ: մի՞ ՚ի հարկէ, մի՞ իրեւ բռնագատելով, մի՞ մարդահաճութեամբ կամ կեղծաւորութեամբ, այլ՝ հեղութեամբ առէ, ընդունել զրանն ընդարյու (Ա-բէ. Ը-ուն. ՚է Ա-ն. Յ-ուն ե):

Հապուտած է.

— “Եշտանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքայագեցին” (Ա-բէ. ՚է 6):

Այս հոգեոր բաղձալի քաղցութիւն և ծարաւութիւնը Աստուածային չնորհաց ՚ի ներքս հոգւոյն տրմալրի և օր ըստ օրէ յառաւելն բերի և գերազանցէ Աստուածային գերազանց սիրոյն ներգործութեամբ: Ահա զայսպիսի ներքին հոգեոր ծարաւութիւն զգայր և ունէր երջանիկ մարդարէն Դաւիթ: “Օարաւի է անձն իմ առ քեզ Աստուած՝ հզօր և կենդանի, ե՞րբ եկից երևեցայց երեսացը Աստուածոյ”:

Օայս հոգեփափագ սիրոյ ցանկութիւն և ծարաւութիւն Աստուածային երանաւէտ տեսութեանն փառաց՝ երանելի սուրբն Արսէն՚ի նահատակութիւնս երջանիկ դասուց վարդապետաց զօրավարաց՝ բարձրաբարբառ իմն յայտնէ յասելն.

— “Այդ փութամ տեսանել դօրն, և յաւուր անդ զժանն եկեալ հասեալ ՚ի վերայ մեր: Երբ իցէ զի ելեց ՚ի թանձրադանդաղ ձանձարի մարմնոյն այսորիկ, ե՞րբ իցէ զի աենից զբեղ Տէր Յիսուս, ե՞րբ իցէ զի աներկիւզ եղէց ՚ի մոհուանէ, ե՞րբ իցէ զի զիտութիւնս իմ հասցէ ՚ի կատարեալ զիտութիւն: (Օդնեա ինձ Տէր, օգնեա ինձ և կարկառեա զամնադոր աջդ յօզնականութիւն խոսաման բանիցս իմոց, և գործք արգեամբը կատարեացին ՚ի վերայ մեր, և փառաւոր լիցի յիս մեղաւորս անուն Ցձնդ մերոյ (Հիսուսի ՚Քրիստոսի): Օդյս երբէ ասաց երանելին՝ յուն կացին ՚ի բազմականացն անդ, գոհանային տոելով՝ փառք քեղ Տէր փառք քեզ՝ թագաւոր, զի ետուր մեղ կերակուր ուրախութեան, լոյն զմեղ Նոզուովդ սրբով, զի դացուք առջի քո համոյք և մի ամաչեցեալք, զի զու հատուցանես իւրաքանչիւր ըստ դործու իւր (Ա-բէ. ՚է):

— “Աեք հրաւիրանաւն կոչեցան ՚ի հոգեոր հարսանիսն, զի վայե-

լեցեն դբարիսն, որք մեծաւ բաղձանքը ցանկան լնուլ արդարութեան ճաշակացն։ Որպէս քաղցեալք և ծարաւիք ըստ համահամ՝ քմացն՝ խորակաց և ըմպելեաց լցուցանեն զգէաս ցանկութեան ՚ի կերակուրս և յըմպելիս, այսպէս և ցանկացողք Աստուածայնոցն վայելից՝ արժանաւոր կարգօք փութեան հասանել ՚ի յոյժ ախորժելի ճաշակումն, որ կայ մայ միշտ, որ երանութեամբն է զարդարեալ յարքայութեան արդարոց։ Որ միշտ վայելին դաննուազ և զանսպառ բարիսն, որք ասաէն ժողովնցին ՚ի շաեմարանս անմահ կննացն յականենից,, (Ասո. Յանակի. ճառ. 3):

♦ ապուած Ե.

— “Երանի ողորմածաց, զի նոքա ողորմուի դացեն” (Պատ. Ն. 7):

Երդարե մեծի կրանութեան և գերազոյն փառաց և վարձուց են արժանի՝ ըստ սուլը զլոց՝ և ճշմարտագոյն և Աստուածահաճոյ ողորմածք՝ հեռացեալք ՚ի խարդախ և ՚ի կեղծուապատիր մոտաց և ՚ի մնապարծ փառասիրութեց, ըստ անժիստելի հրամանի փրկչին մերոյ Հիսուսի։

— “Օ գոյշ ւերուք ողորմութեան ձերում՝ մի առնել առաջի մարդկան, որպէս թէ ՚ի ցոյց ինչ նոյց. գուցէ և վարձս ոչ ընդունիցիք ՚ի սորէն ձերմէ՝ որ յերկինս է։ Այլ յորժամ առնիցես ողորմութիւն, մի հարկաներ փող առաջի քո, որպէս կեղծուարքն առնեն ՚ի ժողովուրդս և ՚ի հրապարակս՝ որպէս զի փառաւորենցին ՚ի մարդկանէ.... Այլ գու յորժամ ողորմութիւն առնիցես, մի գիտացէ ձախ քո զինչ դարձէ աջ քո։ որպէս զի եզերի ողորմութին քո ՚ի ծածուկ, և այյրն քո որ տեսանէ ՚ի ծածուկ՝ հատացէ քեզ յայտնապէս” (Պատ. Ա. 1—4):

— “Ա՞ զողորմութիւնն, և ձախ՝ զփառասիրութիւնն ծանեպք. արք իրատէ թէ մի գիտացէ ախտ փառասիրութեան զողորմութեանն շնորհ, քանզի գիտենալին զախտանայն անէն (Յան. Կառ. ՚ի Ա) կն. Պատ. Ա.):

— “Այլ մի եր ՚ի ինսարիս՝ անուն կրունելիս՝ հարիւրապես, ՚ի գնդէ՝ որ կոչէր իտալացի՝ բարեպաշտօն և երկիւղած յլ ստուծոյ տմնացն առմբ իւրով. առներ ողորմութիւնո բազումն ՚ի ժողովրդեանըն. և յաղօթո կայյր առ Աստուած յամնեացն ժամ։ Խառն ՚ի աեւլեան յայտնապէս զիններորդ ժամն առուրն, զհրեշտակ Աստուծոյ զի մոտանէր առ նա՝ և առէր ցնա. Դուռնելիք։ Եւ նո հայեցեալ ընդ նա՝ զարհուրեցաւ, և ասէ. զի՞ է Ցէր, և ասէ ցնա. ազօթք քո և ողորմութիւնք քո ելին յիշտատկաւ առաջի Աստուծոյն (Գարձ. Ա. 1—4):

— “Օք անողորմ դատասահն լինելոց է այնմ, որ ոչ առնիցէ զուզորմութիւն. քանզի բարձրագլուխ պարծի ողորմութիւնն առ դատասահնաւն (Քահ. Է. 13):

— “Աք գրծակցութեամբ ողորմութեանն Աստուծոյ նմանեալ, ոյժ օգնութեան առեալ Աստուածեղին զօրութենէ անափ, զի ամենեցուն ողորմոցին առաջնորդել և ուսուցանել, օգնել նեղելոց, լըցացանել զկարութեալ ՚ի պետ հոգեսր և մարմաւորս։ Օք ընկալցին զբարիս յերկի առազողութեան շնորհան ՚ի Տեառնէ, և ՚ի հանգերենալսն զառատապարդե բարիսն՝ որ լին է ամենայն երանութեամբը, որ պարագանեաց Ան ողորմածաց (Քահ. ճախ. 3):

— “Զիք ինչ յոռագինութեանց՝ որ այնքան նմանօղս առնէ զնեզ Աստուծոյ, որպէս զողորմութիւնն ըստ Տեառն բանի՝ թէ եղերաք նմանօղք հօրն ձերոյ, որ ծագէ զարեղակն ՚ի վերայ շարաց և բարեց, և ածէ անձրէ ՚ի վերայ արդարոց և մզաւորաց։ Եւ գիրք ՚ի բազում տեղիս անուն Այ զողորմութիւննէն։ Դաւիթ ասէ “Ողորմած և արդար է Տէրու այսպէս և Անվան և ամենայն Արդարէք։ Եւ արդ եթէ Աստուած ողորմած անուանի յԱստուածաշունչ գիրս, յայտնապէս հաւատացի՛ զի և մարդ եթէ ընափեր ըստ իւրոյ շափոյ զօրութեանն ողորմած լինիցի՛ Աստուծոյ նմանեցի։ Խայց պարտ է ընարել զողորմութեան ճշմարտութիւնն, ընդ որ համբ Աստուած, և հաւատացանէ. զի սմանք փոխարեն յորոց տան՝ ակն ունին բնգուանեղոյ, որպէս մեղաւոք մեղաւորց։ Եւ այլք ՚ի գովաց, զի բարի համբաւեցին. և հետք թէպէս և տան աղքատաց, այլ ՚ի փառաց յուսոյ ձգին ՚ի տան. և այսպիսէ ոչ յերանութեան մասին են. և ոչ դացեն զողորմութիւնն. զի առ ոս զլարձան (Աներ. Հայրհ. ՚ի Անու. Անու. Ե):

— “Երկիցուք և զարհուրեցուք յայնպիսի տհագին սպառնաւեցն։ Անողորմ ասէ գատասահն լինելոց է այնմ, որ ոչ առնէ զուզորմութիւն։ Օչորպիսի անգամանդ սիրացքեկանէ այս ձայնս ահարիւ, ՚ի պիտ առցուք զշահն ողորմութեան, և զօգուտն ՚ի նմանէն ծանիցուք։ Այն անմատացուք չորեն անասնոց, և մի ՚ի պորտ և յորովոյն հայեցուք։ Այն գիրկս արկցուք ընկեցն, և մի առ մեղ պինդ կալցուք։ Ամենայն ոք՝ որ գիրկս արկանէ փշոց, վասի մարմով. և ամենայն՝ որ ժողովէ զիտուշ ագռհութեան, վասի հոգւով։ Այսոն զի արգարե փուշք են վնասակարք և հեղձուցիչք հոգւոց ընկեցն ցանկութիւնք։ Օք ոչինչ յայլոց ախալից գիտէ այնպէս քակել զուր սիրոյն Աստուծոյ, որպէս ագահուի, վասն զի որ գերի ՚ի նմանէ, յԱստուած ընդ մամնայի փոխանափէ։ Այ համարհեալ է այնպիսւոյն պատուիրանքն Աստուծոյ։ Այ համարհեալ է նմա և սպառնալիք գիշենին։ Այ համարհեալ է նմա և առ սկը ընշեցն՝ պատիւ արքովումն։

Օյ եթէ Տէր արքայունն արհամարհեալ է նմա, և նա ընդ ոռկոյ
փառառէ զնա իրեւ զվարգա զորդին կորստեան, զի՞նչ ինչ զոյ
պետուական նմա: Եւ զայտոցիկ վճիռն Տէրն մեր ինքնին հատանէ.
“Ու կարէք Աստուծոյ ծառայել և մամնայի” (Առէ. Ը նորհ. Դ
Մեն. Յոէ. Էսո է):

Հարուած է:

— “Երանի պյոցիկ՝ որ սուրբ են որախիք, զի նոքա զԱստուծ
աեցէն” (ԱՌ-Պ. Ե. 8):

Անդանչելով մեր՝ ոչ միայն կորուսանեմք զյաւիտենա-
կան երանութիւնսն զԱստուծային փառաց ժառանգու-
թեան, այլ և կրկին արատս ստանամք ՚ի հոգիս մեր:
‘Սախ’ հոգին մեր զըկի ՚ի սրբարար շնորհաց Զիսուսի
Վրիստոսի, և հեռանամք յորդեզրութենէն Աստուծոյ
և ՚ի ժառանգութենէ երկնից արքայութեան. մանաւանդ
իշխէ սկզբնաշարն ստանայ ՚ի վերայ մեր, և յաւիտե-
նական պատիմն առաջնորդէ մեզ: Եշրկորդ՝ ներգործի
՚ի սիրտս մեր անկարգ տրամադրութիւն, որով իմացա-
կանութիւն մեր խանգարին մանաւանդ թէ կուրանայ ՚ի
տեսանել զմեղացն չարութիւն. և այնուհետեւ ոչ կարէ
բաղձալ առաքինական գործոց բարութեան: Առսկ յե-
տոյ չարութիւն գործոց մեղաց գառնայ ՚ի սովորութիւն,
և սովորութիւնն լինի երկորդ բնութիւն: Խակ մինչ կա-
տարեալ զդշմամբ՝ խոստովանութեամք և ապաշխարու-
թեամք դառնամք ՚ի մեղաց, յայնժամ վերանորոգի սիրտ
մեր և հոգի Աստուծային սրբարար և ներողութեան
շնորհիւն: Ահա զայս ամենայն սրբութիւնս քարոզեն մեզ
սուրբ Պարոց հոգեշունչ բանք:

— “Ղարձն զերես քո ՚ի մեղաց իմաց, և զամենայն անօրէնուիս իմ
քամա լինէն: Աիրա սուրբ հաստատեալ լիս Աստուծ և հոգի ու-
ղիղ նորոգեա ՚ի փոքի իմաւմ” (Առէ. Ծ. 11. 12):

— “Եւ տաց նոյս սիրտ այլ. և ողի նոր պարգևեցից նոյս, և հա-
նից զսիրտն քարեղին ՚ի մարմանց նոյս, և աաց նոյս սիրտ մարմանց:

Օյ ըստ հրամանաց իմոց գնացեն, և զիրաւունս իմ պահեցեն, և արասցեն զնոսա. և եղիցին ինձ՝ ի ժաղովուրդ՝ և եւ եղեց նոցա յլլան, (Եշվի. Ճ. 19. 20):

— “Ակրեկը՝ այժմ՝ որդիք Այ եմք, և չե եռ է յայտ՝ եթե դեշ լինելոց իցեմք, գիտեմք՝ զի յարտամ նա յայտնեցի՝ նման նման լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա՝ որպէս և էն: Եւ ամ որ ունի զայտ յայտ յանձին՝ սրբէ զանձն իւր որպէս և նայն սուրբ էն (չ Յով. Է. 2. 3):

— “Այլ ըստ սրբոյն՝ որ կոչեաց զձեզ՝ և դուք սուրբք յամենայն գնացոց ձեր լինիջիք: Ա ասն որոյ գրեալ է, եթե եղերուք սուրբք, զի ես սուրբ եմ” (չ Պիտ. Ա. 15. 16):

— “Ոչ զիակը՝ եթե ատմար էք Աստուծոյ, և հոգի Աստուծոյ մատկեալ է՝ ի ձեզ: Եթե ոք զտամար Աստուծոյ ապականէ, ապա կանեցէ զնա Աստուած, զի տամար Աստուծոյ սուրբ է, որ էք դուք”, (չ Կրտ. Է. 16. 17):

— “Որ շնորհաքն Աստուծոյ՝ հաւատով և ճշմարտով, սրբուք և արգարով զամենայն բիծո մարմոյ և մոտաց սրբեն՝ զշար ցանկուին: Եւ մաքուր խորհրդով և անարտատ մարմով հային ՚ի փառան Տեառն, և տեսանեն իրեն ընդ հոյելք՝ իմանալի մոռք զեմանալի Աստուածուն զյոյս: Ապա թէ ժանդով մեղաց աղտեղեալ իցէ, չար ցանկութեամբքն և չար խորհրդովն և չար դործովն, և ոչ սրբ ըզ-խորհուրդն և զզպայտրանան նայել ՚ի վեր ՚ի ճառագայթո Աստուածուն՝ աւ ՚ի վիրիսառուն է արգարուե արեգակն. ոչ տեսանէ զյոյսն մած ամենասուրբ երրորդուն, որ յիմանալիօն ծագէ և լուսաւորէ զսուրբ-ուն սրախւ և զանարատան անզամզք: Օյ ժառանդեցեն զերտնուիս կենացն անձմահից, որ ապա ասա հաւատաշեայ երտնուեն՝ որ ՚ի Վա (Աստ. Լ. սու. ՚ի Յահու. Գու ՚):

— “Այդ՝ թէ զիարդ ստացուք զայն՝ որովք լինիք երտնեկը և Աստուծոյ տեսայն արժանի, աստացուք: Զարուին յերկուս բաժանի, խորհրդովք և դործովք, և երկագանչիւր օրէնս եդ Աստուած. աստ-ցին օրինաքն զգործով անիրաւուին տանջեաց, երկրորդաւս՝ զառ ՚ի խորհուրդն և ՚ի բանս զյարձակումն չարուէ: Այդ՝ ամենայն ոք՝ որ ըստ պատուիրելոյ երկուց օրինաց՝ ՚ի բաց կայ ՚ի չարեաց բանից և դործոց, և փոխանակ չարին զբարին գործէ և խորհի, նա է սուրբ սը-տիւ. որ երտնելոյ Աստուածային տեսուեն արժանաւորի: Եւ որպէս սուրբքն սրախւք՝ երտնեկը են, նոյնպէս և որ աղաեղեալքն են մոռք՝ ողորմելիք են: Օյ որպէս մաքուրքն սրախւք՝ զԱստուած տեսցեն, նոյնպէս և պիղծքն և աղտեղասելքն ՚ի սատանայի գևմ հային: Այդ՝ վառն զի Աստուած լոյս անուանի և կեանք, և սատանայ՝ իտ-ար, և մահ, և յանձնիշխան կոմաց տռաջի կայ մեր գնել յոր և կամփ-

ցիկը, փախիցուք 'ի բանսակուին 'ի խաւարային կերպարանէ, և տպա-
ւորենցուք 'ի հոդիս մեր զԱստուած այլին լուսղին կերպարանն (‘Եթ-
Շնորհ. Է ԱՆԴԻ. ՎՐԱ. Ե. 8):

Համարածուած է.

— “Եղանի՛ խաղաղարարաց, զի նոքա որդիկը Աստուածոյ կոչենցին,,
(ՎՐԱ. Ե. 9):

Այս խաղաղութեան պարզե նախ յԱստուածուսա 'ի
յերկնից շնորհեցաւ մեզ և աւետարանեցաւ 'ի հրեշտա-
կաց անտի, որք օրհնէին զԱստուած և ասէին “Փառք 'ի
բարձունս Աստուածոյ, և յերկիր խաղաղութիւն, 'ի մար-
դիկ հաճութիւն,, (Պ. Ա. Է. 14): Եւ այսր ամենացան-
կալի խաղաղութեանս ծմարիտ հեղինակ և սքանչելի ներ-
գործօղ մարդասիրական տնօրէնութեամբն ինքնին Քի-
սուս Կրիստոս փրկիչ մեր եղեւ:

— “Օխաղաղութիւն թողում ձեզ, զիաղաղութիւն զիմ տամ
ձեղ” (Յակ. Ճ. 27):

— “Խակ այժմիկ 'ի ձեռն Քիսուսի Կրիստոսի, որք՝ որք երբեմ
հեռաւորքն էիք, մրձաւորք եղէք արեամբն Վրիստոսի: Օ, ի նա է
խաղաղութիւն մեր, որ արար զերկուսեանն մի, և զմիջնորմն ցանկոյն
քակեաց զթշնամութիւն 'ի մարդի իւրում: և զօրէնս պատուիրանացն
հրամանօրքն խափանեաց: զի զերկոսին հաստատեցէ ինքեամբ 'ի մի
նոր մարդ, և արասցէ խաղաղութիւն, և հաշտեցուոցէ զերկոսին միով
մարմաղ բնդ Աստուածոյ խաչին իւրով. քանզի սպան զթշնամութի
յանձին իւրում, և եկն աւետարանեաց խաղաղութիւն ձեզ հեռաւո-
րաց, և խաղաղութիւն մերձաւորաց” (Ճ. Ք. Բ. 13. 17):

Ապա խաղաղասէրն ոչ միայն երանութիւն՝ այլ և կերպա-
րանակցութիւն միաձնի Արդոյն Աստուածոյ ունի. վասն
որոյ սրբազան առաքեալքն սիրայորսոր բանիւք իւրատէին
զհաւատացնալս՝ խաղաղութեան զշետ երթալ:

— “Եւ խաղաղութիւնն Աստուածոյ՝ որ 'ի վեր և քան զամնայն ըդ -
միառ, պահեցէ զսիրաս ձեր և զմիաս 'ի Կրիստոս Քիսուս: Եւ խա-
ղաղութիւնն Վրիստոսի հաստատեցի 'ի սիրտս ձեր, յոր և կոչե-
ցայքն միով մարմաղ. և գոհացողք լինիջիքն (Փէլտ. Ճ. 7. Ա-Ղ. Է. 15):

— “Պառուղ արդարութեան, խաղաղութեամբ սերմանի այնպիկ՝
որք առնեն զիազաղութիւն” (Յահով. է. 18):

— “Միրելիք՝ այսոցիկ սպասեալ, փոյթ յանձին ունիջիք՝ անբիծք և
անարատք գաւանիլ նմա՞ի խաղաղութիւն” (Է. Պիո. է. 14):

— “Այ գործակից են որդույն Աստուծոյ, որ արար խաղաղութիւն
և հաշտեցոյց զայըր ընդ արարածու: Օյ որ հրաժարեալ է ՚ի չոր
տմբուխից և ՚ի խռովութենէ և խաղաղացեալ է սիրով, այնպիսին ունի
զհմել խաղաղութեան մատար հոգույն ՚ի Վրիսոսու: Օյ որպէս
Արդին Աստուծոյ՝ որ երարձ գիւռովութիւնս որ յաղաղու մեղաց պար-
աեաց եր առ մարդիկ, և աւետարանեաց զիազաղութիւն, նոյնպէս մեղ
ասէ լինել խաղաղարար, զի եղբարք նորա լիցուք՝ նմանեալք խաղա-
ղարին: Օյ թէ մեծաց իրաց խաղաղարար լինի և փոքունց յա-
շագան Աստուծոյ, և մարդկան փրկութիւն, և բառնայ ՚ի միջոց զիտա-
սակար թշնամութիւն հոգույ և մարմոյ, հաշտ և խաղաղականին
հանգիպի, և զանոն և զիառաս Արդույն Աստուծոյ ժառանգէ հան-
դիսիւք լաւութեան: Այ է սուրբ՝ և ամբիծ և տնարատ խաղաղարար
՚ի Վրիսոսո, աստ մեծարի և պատուի, և անդ բարձրանայ և փառա-
սրի խաղաղ երանութեամբն որ ՚ի Վրիսոսու” (Առաք. Աստուծոյ ՚ի
Յանակ: Տառ ։):

— “Այդ՝ զի բնութեամբ Արդին Աստուծոյ եղէ միջնորդ՝ և արար
խաղաղութիւն, նորին աղագաւ երանէ Տէրն զիազաղարարն, և իւրում
կաշմանն արժանաւորել խոսանայ՝ որք զնորոյն առնեն զգործու: Օյ
որպէս Տէրն ըստ ամենակարօղ զօրութեանն արար խաղաղութիւն
յերկինս և յերկի, սոյնպէս ըստ շափու իւրեանց տկարութեան ՚ի
մեջ սակաւուց առնեն խաղաղութիւն: Այլ առաջինն մեծ է, ինքն
առ ինքեան առնէ խաղաղութիւն՝ ըստ սահմանելոյ արարքն, ուղ-
շեղով զհոդի և զմարմին՝ տիրական կամաց հոգույն տուլ իշխել ՚ի
վերայ կամաց մարմոյն, և ծառակցին հնաղանգել կամաց հոգույն:
Եւ զայուպիսի խաղաղութիւն առնիցէ առ ինքն և առ այլը՝ իրատե-
լով և ուսուցանելով, նա է առաջին արժանաւոր կոչել Արդի Աստո-
ծոյն (Առաք. Աստ. Անդ. ՚ի Արդ. Աստ. Ն. 9):

Հարուած ը:

— “Եցանի՛ որք հալածեալք իցեն վասն արդարութեան, զի նոցա
և արքայութիւնն երկնից” (Առաք. Ն. 10):

— Օայս երանութիւնս նախ առաջին վայելեցին սորա-
զան Առաքելոցն դասք՝ Հոգեոր պաշտօնեայք սուրբ Խ-
կելեցւոյն Վրիսոսոի, ըստ որում Յիսուս Վրիսոս

ծանուցեալ էր կանխաւ յաւետարանի անդ իւրում. “Յիշեցէք զբանն՝ զոր ասացի ձեզ, եթէ ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր. եթէ զիս հալածեցին, ապա և զձեզ հալածեսցին, (Յովի. ժԵ. 20): Ուստի սրբազն առաքեալն Պօղոսի բերանոյ ամենայն առաքելոց և առաքելապատիւ սուրբ հարց, և ՚ի Վրիստոս Յիսուս նահատակեալ մարտիրոսացն սրբոց համարձակ գրէ.

— “Ո՞վ մեկնեցէ զմեզ ՚ի սիրոյն Վարիստոսի, նեղութիւն, թէ անձկութիւն, թէ հալածանք, թէ սովոր, թէ մերկութիւն, թէ պիշտ, թէ սովոր. որպէս և գրեալ է, վասն քո մեռանիմք զրհանապաղ, համարեցաք իրբե զոշեար ՚ի սպանդ,” (Առու. ը. 35. 36):

— “Օ Վայիշն զհանգէս ցուցանէ բանս և զամենայն առաքինութեանց զի որ յամենայնէ օտար է, և մասն ինչ չունի ընդ երկրասէրս և պատճառ ինչ եկամուտ զբաղմանց անյար ՚ի վնասակար ցանկուխս, այնոքիկ ին որ ՚ի չարէն հալածեալք և առ ԱՆ գիմազրաւեալք. հաւատով վասն ճշմարտութեան ԱՆ եատարանին քարոզութեան: Որպէս ԱՆ առքեալն ասէ եթէ:” Որ կամին ԱՆ ստուածպաշտութեամբ կեալ ՚ի Վարիստոս Յիսուս ՚ի հալածանս կացցեն. զի մարդք չարք և կախարդք յառաջ եկեսցին ՚ի չար անդր ՚ի մողորեցուցանել:” Իսկ սուրբքն հալածեոցին ՚ի չարէն ՚ի բարիսն որ առ ԱՆ ստուած և յԱՆ ստուծոյ առեալ. զի մի նմանեացին անառակ որդւոյն, և խարեալ ՚ի դիւաց ելցին ՚ի Հայրենի խնամոցն, վատնեալ զսրբութեան զվարսն անառակաւթեամբ: ԱՆ գարձեցին ՚ի նորին նմանեալ Հայրենի խնամն ՚ի չարտիրաց հալածեալ, ՚ի դիւաց և ՚ի մարդկանէ, հասցեն հալածանք ՚ի խսոսացեալ աւեափան արքայութեանն անձառ երանութեամբ,, (Առու. Առու. Յառ. Տառ. 3):

— “Առդ մի գժուարեսցուք յերկրաւորաց ՚ի բաց վարեալք, զի եթէ աստուած հալածիմք, ՚ի յերկինս փոփոխեալ բնակեացուք, զի ծաղիկ արքայութեանն պազոյ նեղութիւնն է. եթէ կամիմք զպտուղն կիթել՝ նախ զծաղիկն հաւաքեսցուք, հալածեալք եղիցուք աստ, զի հասանիցեմք վերին կոշմանն. բայց մի ոք զերանութիւնն՝ որք վասն հաւատոցն հալածին՝ միայն ասիցէ, զի թէակտ և կատարեալն նոցաէ, սակայն և ՚ի մասին երանութեան են որք վասն հոգեոր բանի իւրատու ըստ օրինաց՝ որպէս Յովի աննէս, և կամ վասն այլ ինչ արդար գործոյ զբաղարտին և գոհութեամբ տանին, երանելք լիցին, (Առու. Ներ. Հայուն. ՚ի ԱՆ Են. Առու. Ե. 10):

Հայուսած իւ.

— “Աշանի է ձեզ յորժամ նախատիցեն գձեղ և հայածեցեն,
և ասիցեն բան չար զձէնջ սուս՝ վասն իմ. յնծացէք և ուրախ լեռուք,
զի վարձք ձեր բազում են, յերկինս, (Ո՞ո՞. Ե. 11. 12):

**Այսու աւետարանական երանութեամբ իւրով Ծիսուս
Վրիստոս Փրկիչն մեր կամի զսիրելիս իւր սրբազն առա-
քեալս և զՃմարիտ հաւատացեալս իւր հաղորդս առնել
չնորհաց համբերատար անձին իւրոյ՝ յարժանացուցանել
չնորհաց իւրոց երանական փառաց։ Տես զսոսկալի հայ-
հոյութիւն ապերախտ Արէից, տես ևս ընդ սմին զմար-
դասիրական համբերութիւն Փրկչին։**

— “Պատասխանի ետուն Արէայքն՝ և ասեն, յնա. ոչ բարւոք ասեմք
մեք՝ եթէ սամարացի ես դու, և դմ դոյ ՚ի քեզ։ Պատասխանի ես
Ծիսուս՝ և ասէ. յիս դե ոչ դոյ, այլ պատուեմ զհայր իմ և դուք ա-
նարդէք զիւ։

— “Դարձեալ կրկին անդամ կոչեցին զայրն որ կոյրն եռ, և ասեն
յնա. առուր փառս Աստուծոյ, մեք գիտեմք զի այրն այն մեղաւոր է։
Եւ նա ասէ. թէ մեղաւոր իցէ ես ոչ գիտեմ, բայց զայր գիտեմ, զի
կոյր էի և արդ տեսանեմ։

— “Դու ասէին բազումք ՚ի նոցանե. դմ դոյ ՚ի նմա՝ և մոլեզնի՛, զի՞ բբ-
նաւ լուէք նմա. կէսքն ասէին, այսպիսի բանք ոչ դիւահարի են. մի՞ թէ
դե կարէ՞ զաշս կուրի բանալն (Յուլ. ը. 48. 49. Ե. 24. 25. Ե. 20. 21):

— “Այս համարհաց զնա Արովդէս հանդերձ իւրովք զօրականո-
քըն. և այսն արարեալ՝ էարկ զնովաւ հանդերձս սպիտակս, և ետ
տանել անդրէն առ Ախղատոսու. Այս կայր ժողովուրդն հայեցեալ.
անդունէին զնա և իշխանք հանդերձ նորքօք և ասէին. զայլս ապրե-
ցոյց, ապրեցուցէ և զանձն՝ եթէ դա է Վրիստոս Որդի Աստուծոյ
ընտրեալն։ Այսպն առնէին զնա և զինուորքն, եկեալ առաջի՞ մա-
տուցանէին նմա քացախ, և ասէին եթէ դու ես թագուսոր Արէից՝
փրկեա զանձն քո՞ (Պ. սո՞-է. Է. 11. 35-37):

— “Պարտ է մեզ որք կարողքս իմք՝ զտկարութիւն տկարացն
բառնալ. և մի՞ անձանց և եթ հաճոյ լինել. Այլ իւրաքանչիւր ոք ՚ի
մէնջ ընկերին հաճոյ լինիցի ՚ի բարիս՝ վասն շինութեան։ Վանդի և
Վրիստոսու ոչ եթէ անձին հաճոյ եղև, այլ որպէս և դրեալ է նախա-
տինք նախատաց քոց անկան ՚ի վերայ իմ։ Իայց որ ինչ գրեցաւն,

՚ի մեր վարդապետութիւն գրեցաւ . զի համբերութեամբ և միսիթա-
րութեամբ գրոց զյոյսն ընկալցուք» (Առաջ. ԺԵ. 1-4):

— “Եւ Ալ իբրև հաղորդեալք ՚Քրիստոսի շարչարանացն՝ ուրախ լի-
նիջիք, զի և ՚ի յայտնութեան փառաց նորա ցնծայեալ բերկրեացիք:
Խակ եթէ նախատիցիք ևս վասն անունն ՚Քրիստոսի, երանելի էք.
զի փառացն և զօրութեանն անուն է. և Աստուծոյ հոգին ՚ի վերոյ-
ձեր հանգուցեալ է» (ՏՊԵ. Դ. 13. 14):

— “Օ ՚ի ՚ի ձեռն լաւութեան փառք և պարծանք ընծային յԱս-
տուծոյ հանդիսիւք նահատակեալ ՚ի ՚Քրիստոս, որ զինուորին ընդո-
դէմ հակառակին ճշմարտութեան : Եւ օգտակար է առ ամենայն
մատուցեալսն համբերութիւն ՚ի կամն Աստուծոյ, զի զաւետիր բա-
րութեանցն ունիցին զարդիս և զհանդերձերցն» (՚ի Յանձի. Աստուծոյ. Թարգմ. Ե. 1-ուն. Թուա Ե):

— “Եւ ոչ եթէ փառք ինչ էին նախատինք, զի կախարզս և մով-
րեցուցիւթ և ժանտագրծս անուանէին : Եւ այն՝ յորժամ զնշանն
գործէին առաքեալքն, և որ յետ նորա սոորբքն. զի վասն տմեննցուն
ասէ՝ որք բամբասին ՚ի շարաց՝ վասն ճշմարտութեան բանին, և ասե-
լովն թէ զամնայն բան լոր, զհոյլս ամենայն հայհոյութեցն նշանակի,
որք անդուռն բերանով բամբասէին զարս Աստուծայինս : Եւ զի
մի կարծեացի թէ ընդ վայրապար բամբասանաց տացէ երանութիւն,
յաւելու՝ և ասէ սոոր վասն իւ. երկուս կէտս դնէ ՚ի միջի, մի՝ յորժամ
վասն նորա իցեն բամբասանքն, և միւս ևս՝ յորժամ սոււր լինիցին :
Ապա յիրաւի եղկելի է բամբասեալն՝ զայթակղութեան պատճառք
լինել տկարաց, որում վայն է վմիր՝ յոյր ձեռն դայցէ զայթակղութ.
նորին աղազաւ ոչ սասաց “Եթէ չարախոսեցն զձեղ յինչ և է պատ-
ճառաց, երանելի էք” այլ թէ “չորժամ վասն արդարութեան հմա-
լածիցիք առաքինութեամբ, լինիք արժանաւորք երանութե” (Կաթ. Շ. Հայու. ՚ի Եկ. Աստ. Ե. 11):

Այս այս ամենայն բանք քրիստոնէական վարդապե-
տութեան և իննեակ ամենացանկալի աստիճաննք երանու-
թեանցն՝ կնքեացին այսու աւետարանական բանիւ կենա-
րարին մերոյ Յիսուսի ՚Քրիստոսի, եթէ “Ով արասցէ և
ուսուցէ, նամեծ կոչեսցի յարքայութեան երկնից” (Աստ. Ե. 19):

ԴԱՍ ԽԸ:

Հ. Առ հասարակ մանկունք ուղղափառ սուրբ Կիւլցւոյն Քրիստոսի քանի՞ տեսակս քրիստոնէական բանից պարտաւորին սերտ 'ի բերան ունել մտառութեամբ։

Պ. Եշիւ են կարևորագոյն սերտելեք 'ի բերան՝ և սրտի մտօք արտասանելեք։ Առաջինն՝ է հանգանակին հաւատոյ՝ որ է յերկոտասան մասանց հաւաքեալ՝ ըստ թուոյ երկոտասան սրբազն Առաքելցն, զորոյ բացատրութիւնն տեսեր'ի դասան թւ— | : Եշիւրորդն՝ է Տէրունական աղօթիցն յատուկ ուշադրութեամբ և ջերմեռանդն սերտողութիւն։

Հ. Առն էր ասեմք Տէրունական, և զի՞նչ ինչ կատարելութիւնս հայցուածոց և խնդրուածոց մերոց գտանեմք 'ի նմա։

Պ. Ասի Տէրունական աղօնի+, վասն զի ինքնին Տէրն մեր Քիսուս Քրիստոս ուսոյց մեզ աւետարանական բանիւ իւրով յասելն “Այսպէս կացէք դուք յաղօթս։ Հայր մեր՝ որ յերկինս, և այն”, (Առաք. Է. 9)։ Եւս և զանազան և վսեմ կատարելութիւնք հայցուածոց երեխն յայս Տէրունական աղօթս, զորս ուսանել ունիմք յիւրաքանչիւր Հատուածս բանիցն։

Հայուածն ա.

“Հայր՝ մեր ո՛չ յերկնն”։

Այս իսկ է գերագոյն կատարելութիւն սքանչելի վստահութեան մեր մարդկային մահացու բնութեան, համարձակիլ զարարիչն ամենայն արարածոց զանեղ բնութիւնն Աստուածային զՀայրն ամենակալ՝ կոչել համարձականայն մեզ Հայր։ և այս իսկ է չնորհ փրկարար տնօրինուել Քիսուսի Արիածնի Արդւոյն Աստուածոյ. որով եղաք մեք շնորհական որդիք Հօր Աստուածոյ. որպէս և նոյն ինքն

Յիսուս Վրիսառա փրկիչն մեր՝ փառակից և էակից որդի
սորին Եստուածութեան՝ յետ յարութեան զայն շնորհ
որդեգրութեան աւետարանեաց յասելն

— “Եշանեմ ես առ և ապան իմ և առ և այր ձեր, և Եստուածն
իմ և Եստուած ձեր” (Ըստ. Է. 17):

— “Օ, ի ոչ առէք զհողին ծառոյւթեան միւսանգամ յերկիւզ,
ու առէք զհողին որդեգրութեան, արալ աղաղակեմք՝ Երա, և այր:
Այս ինքն և ողին վկայէ հոգուց մերում, եթէ ենք որդէք Եստու-
ծոյ” (Հայութ. Է. 15. 18):

— “Օ, մանիկր անարդ մահացու՝ իբր զնշոյլ լուսոյ յարգեցեր. ըզ-
և այր քո հզօր ահաւոր օրհնեալ՝ մարդասիրապէս և արժանիս իմոյ
անձին կերեցեր” (Կ. որ. Էլ. Ե.):

Հ. Վրանի՞ զլիսաւոր պատճառս ունիմք համարձակիլ՝
Եստուած և այր մեր խոստովանիլ:

Պ. Օտանազան իրաւամիք արժանացեալ գտանիմք ա-
ղաղակել համարձակ “և այր մեր՝ որ յերինս”, “Եախ՝ զի արա-
րիւմեր է ըստ այնմ”, Ոչ սա ինքն է և այր քո՝ որ ստացաւ
զքեզ, արար զքեզ, և ստեղծ զքեզ” (Է օբխաց լէ. 6):

Երկրորդ՝ զի և այր է մեզ Եստուած, որ իբրև ըս-
քանչելի և այր գթութեանց՝ խնամառատ սիրով և բարե-
րարութեամբ դիտէ զպէտս մեր և զկարիս առաւել քան
զոր ինողեմք և իմանամք:

